ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0916.01.5 «ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0916.01.01.5 «ԴԵՂԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Միջին մասնագիտական կրթության 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության 0916.01.01.5 «Դեղագործ» որակավորման մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:
6. Միջին մասնագիտական կրթության 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտությամբ 0916.01.01.5 «Դեղագործ» որակավորմամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝
   1) դեղագործ՝ մանրածախ դեղագործական կազմակերպությունում,
   2) դեղագործ՝ մեծածախ դեղագործական կազմակերպությունում,
   3) դեղագործ՝ դեղեր արտադրող կազմակերպությունում:
7. Միջին մասնագիտական կրթության 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտությամբ 0916.01.01.5 «Դեղագործ» որակավորմամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.
   1) որոշի դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների պահանջարկը,
   2) ձևակերպի դեղատան տեսականու ապրանքատեսակների պահանջագրերը՝ մատակարարներին,
   3) մատակարարներից ընդունի դեղերը, բժշկական նշանակության առարկաները, հարդեղագործական ապրանքները և ստուգի դրանց փաթեթավորման ամբողջականությունը,
   4) պահպանի դեղերը, բժշկական նշանակության առարկաները և հարդեղագործական ապրանքները,
   5) օգտվի պաշտոնական տեղեկատու աղբյուրներից, դեղի ներդիր-թերթիկից,
   6) տարբերակի մարդու օրգանիզմի վրա դեղերի տարբեր դեղաբանական խմբերի ազդեցությունները,
   7) դասավորի դեղերը ըստ դեղաբանական խմբերի, պահպանման և մերչենդայզինգի կանոնների,
   8) սպառողներին տրամադրի տեղեկատվա-խորհրդատվական ծառայություն՝ դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների օգտագործման ձևի, պահպանման կանոնների և այլնի վերաբերյալ,
   9) կատարի բացակայող ԱԴՏ (առանց դեղատոմսի տրվող, OTC- Over the count) դեղերի հոմանիշային փոխարինում,
   10) ընդունի դեղատոմսեր, ստուգի բաղադրատարրերի համատեղելիությունը և դեղատոմսի ձևակերպման ճշտությունը,
   11) պատրաստի դեղատնային պայմաններում տարբեր դեղաձևեր (կարծր, հեղուկ, փափուկ),
   12) փաթեթավորի և ձևավորի պատրաստված դեղերը,

13) բաց թողնի դեղատանը պատրաստված կամ գործարանային արտադրության դեղերը, բժշկական նշանակության առարկաները և հարդեղագործական ապրանքները,
14) սպառողների հետ իրականացնի հետադարձ կապ, գրանցի և հաղորդի տեղեկություն՝ դեղերի կողմնակի ազեցությունների վերաբերյալ,
15) ձևակերպի մուտքային և ելքային օրդերները,
16) կատարի ապրանքա-նյութական արժեքների հաշվառում և գույքագրում,
17) կատարի դեղատան և դրա ստորաբաժանումների գործունեության տնտեսագիտական վերլուծություն,
18) պահպանի դեղագործական էթիկայի և դեոնթոլոգիայի հիմունքները,
19) կանխարգելի մասնագիտական հիվանդությունները,
20) ցուցաբերի առաջին բուժօգնություն,
21) պահպանի սանիտարական նորմերի, անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային անվտանգության պահանջները: